ՍԱԹԵՆԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԵՂԻՇԵ ԹԱԴԵՈՍՅԱՆԻ ՆՈՐԱՀԱՅՏ «ՔՐԻՍՏՈՍԻ ԽՃԱՊԱՏԿԵՐԸ»

Այս տարի լրացավ հայ գեղանկարչության մեծագույն վարպետներից մեկի՝ իմպրեսիոնիզմի ուղղության հետևորդ Եղիշե Թադեւոսյանի (1870-1936) ծննդյան 140-ամյակը: Խորհրդային շրջանի ուսումնասիրություններում, որոնք կրում են ժամանակաշրջանի կաղապարված մտածողության անխուսափելի կնիքը, Թադեւոսյանի՝ ասպվածաշնչյան թեմաներով ստեղծված աշխատանքները չեն գնահատվել ըստ արժանվույն: Այսօր արդեն նրանք ի հայտ են գալիս նոր արժեւորությամբ: Սույն հոդվածը նվիրված է Ե. Թադեւոսյանի՝ Հիսուսի պատկերով մի խճանկարի ուսումնասիրությանը, որը ժամանակին զարդարում էր ռուսական ուղղափառ եկեղեցու ճակատը: Այս խճապատկերի լուսանկարը վերջերս մեր կողմից հայտնաբերվեց ՀԱՊ-ի արխիվային նյութերում եւ բացահայտում է երջանկահիշատակ նկարչի արվեստի նոր էջը:

Ե. Թադեւոսյանն իր ակունքներով սերում էր համեստ ապրող վաղարշապատցիների ընտանիքից: Հայրը ջրաղացպանի նահապետական ընտանիքից էր, մայրը՝ հոգեւորականի քույր: Նկարչի անհատականությունը ձեւավորվում է Վաղարշապատի, Թիֆլիսի, այնուհետեւ Մոսկվայի կրթամշակութային միջավայրերում: Նա գեղեցիկ արվեստին նախ հաղորդակից է դառնում Մոսկվայի Լազարյան ճեմարանում սովորելիս (1881-1885), ապա մասնագիտական լուրջ կրթություն ստանում գեղարվեստի ուսումնարանում (1885-1894)[1]:

Ռուսաստանի հանրային-քաղաքական ու մշակութային կյանքում բավական լարված էին հատկապես 1890-ական թվականները: Ստեղծագործական լուրջ որոնումների մեջ էին շատերը, նրանց թվում՝ նաեւ մոսկովյան արվեստագետները. երիտասարդ նկարիչներ Ի. Լեւիտանը, Մ. Նեստերովը, Վ. Սերովը, Կ. Կորովինը եւ այլք տենդագին պայքարում էին արվեստի բարեփոխումների համար: Նրանցից յուրաքանչյուրն իրականությունն անմիջական ընկալելու, զգալու եւ ազատ կերպավորելու միջոցով յուրովի փորձում էր հարստացնել գեղանկարչությունը: Իսկ այդ մթնոլորտը չափազանց խորթ ու օտար էր հեռավոր Վաղարշապատի գավառական խուլ իրականության մեջ ապրած հայ երիտասարդի համար: Եղիշեն, սակայն, հետզհետե ընդգրկվում է նոր կյանքի ու միջավայրի հորձանուտի մեջ: Իսկ ռուս բարեկիրթ մտավորականներից մեկի՝ նկարիչ Վասիլի Պոլենովի մոտ ուսանելը, այնուհետեւ նրա հետ մտերմանալն ու ընկերությունը մեծապես ազդում են երիտասարդ Թադեւոսյանի աշխարհընկալման վրա: «Ես անսահման շնորհակալ եմ Վասիլի Դմիտրիեւիչին, երախտապարտ եմ ոչ միայն գեղանկարչական խրատների, այլեւ իմ դաստիարակության համար: Որպես իսկական ուսուցիչ՝ նա իր օրինակով մեր մեջ սերմանում էր լավագույնը»[2],- հետագայում այսպես պիտի հուշագրեր երախտագետ սանը՝ Եղ. Թադեւոսյանը:

Ե. Թադեւոսյանի արվեստում Քրիստոսի կերպարի ստեղծումը մտահղացվել է դեռ

1 Տե՛ս **Р. Драмшян**, Егише Татевосян. М., "Искусство", 1957, էջ 7-10:

2 **Е. Татевосян**, Мои воспоминания о В. Д. Поленове, ՀԱՊ, Եղ. Թադեւոսյանի ֆ. 57, ի. 315:

Մոսկվայի գեղարվեստի ուսումնարանում սովորելու շրջանում: Գլխավոր ազդակը, անտարակույս, ռուս փաղանդաշատ նկարչի՝ Վասիլի Պոլենովի՝ Հիսուսի կերպարի ուսումնասիրությամբ ու յուրովի մեկնաբանմամբ տեսական հետաքրքրությունն էր եւ ազգությամբ հայ իր շնորհալի աշակերտին այդ կերպարի ստեղծման կարեւոր գործին մասնակից դարձնելը: Նա էր, որ Ե. Թադեւոսյանին վարակեց բարոյական վեհ գաղափարներով, մարդկային ամենաազնիվ մղումներով, որոնց կրողն էր նաեւ ինքը: Հիսուսի՝ բարոյահոգեբանական եւ պատմավավերական միտումներով տոգորված կերպարը Կրամսկոյի, Գեյի, Ռեպինի, Պոլենովի եւ ռուս մյուս նկարիչների ստեղծագործություններում այն բանալին էր, որով պիտի փոխակերպվեին ծանր կյանքն ու արատավոր իրականությունը: Ժամանակակից մարդու առաջ ծառացած խնդիրները նկարիչները տեսնում էին աստվածաշնչյան ազնվագույն կերպարի իրական կյանքում ու իրենց իրապաշտական արվեստում մարմնավորելու մեջ: Եւ ահա Ե. Թադեւոսյանը, ապրելով եւ ուսանելով Ռուսաստանում, միաժամանակ սնվելով առաջադեմ մշակույթի ավիշներով, ստեղծագործական նոր մոտեցումներով ստեղծեց համապատասխան կերպարներ՝ գեղանկարչական արվեստ բերելով նաեւ սեփական աշխարհը, այն է՝ գեղարվեստական արտահայտչամիջոցների, գույնի, հորինվածքի, կերպարաստեղծման նոր միջոցների կիրառումներ: Ստորեւ ներկայացնում ենք այն աշխատանքները, որոնք արտահայտում են Հիսուս Քրիստոսի կերպարի առանձնահատուկ մեկնաբանումը Ե. Թադեւոսյանի արվեստում՝

անվանումը	նյութը	չափը	թիվը	գտնվելու վայրը	լուսանկարը
Քրիստոսն ու սամարացի կինը /էսքիզ/	Կտավ ստվարաթղթի վրա, յուղաներկ	41,5x43	1893	Վ. Դ. Պոլենովի թանգարան-ավանդատուն Պոլենովո	
Քրիստոսը Պիղատոսի մոտ /էսքիզ/	Կտավ ստվարաթղթի վրա, յուղաներկ	31x31,5	1893	Վ. Դ. Պոլենովի թանգարան-ավանդատուն Պոլենովո	
Քրիստոսը Պիղատոսի մոտ	Կտավ, յուղաներկ	168x173	1894	Տրետյակովի պետական պատկերասրահ	

Գեթսեմանիի աղոթքը	Կտավ, յուղաներկ	161x107	1900	Էջմիածին Հին վեհարան	
Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքը	Կտավ, յուղաներկ	136x146	1901	Էջմիածին Հին վեհարան	
Քրիստոսի գլուխը (խճանկար)	յուղաներկ, գեպրաքար, փայտ		1908		
Խաչելություն	Կտավ, յուղաներկ	96x61	1918	Էջմիածին Նոր վեհարան	
Քրիստոսը եւ փարիսեցիները	Կտ., յուղ.	59,8x122,3	1919	ՀԱՊ	

Վ. Պոլենովն իր սեփական դաստակերտում՝ Բորկայում (այժմ՝ Պոլենովո), գերմանական մոդեռն ոճի տուն, իսկ արվեստանոց կառուցելուց հետո՝ 1906-ին սեփական նախագծով ձեռնամուխ է լինում ռուսական ոճի չնաշխարհիկ մի փոքր եկեղեցու շինությանը, եկեղեցի, որն ստացավ Սուրբ Երրորդություն անունը[3]: Այն ռոմանական եւ հին ռուսական ճարտարապետական ոճերի ներդաշնակ համադրում է՝ չափազանց հաջող ներգծված Օկա գետափի գեղատեսիլ վայրում: Եկեղեցու ներքին զարդարությունը շատ հարվածներում կրկնում է Երուսաղեմի Ս. Հեղինե տաճարի ներքին հարդարանքը, որին Վ. Պոլենովը ծանոթացել էր իր պաղեստինյան ճամփորդությունների ընթացքում: **Ուշագրավ է, որ Սուրբ Երրորդություն եկեղեցու դռան ճակատին ժամանակին տեղադրված էր Քրիստոսի պատկերը՝ խճաքարերից պատրաստված եղ. Թադեւոսյանի հեղինակած աշխատանքը[4]:** 1941 թվականին՝ Երկրորդ աշխարհամարտի շրջանում, ցավոք, եկեղեցին ռմբակոծություններից բավականաչափ տուժում է, իսկ հայ նկարչի՝ «Քրիստոսի պատկերն» անհետ կորչում է ...

3 Տե՛ս "Поленово", Государственный музей-усадьба В. Д. Поленова. (Автор текста и составитель альбома Ф. Д. Поленов), "Советская Россия", М., 1982, էջ 159-16:

4 Տեղեկությունը ճշտվել է վերջերս Տրետյակովյան պատկերասրահի՝ Պոլենովի արվեստի ուսումնասիրողներից:

Խճաքարերից ստեղծած «Քրիստոսի գլուխը» /1908/ Ե. Թադեւոսյանի արվեստի ցլուսաբանված էջերից է: Վերջերս նկարչի արխիվային նյութերում հայտնաբերվեց մի լուսանկար[5], որի շնորհիվ հնարավոր է դառնում պատկերացում կազմել այդ աշխատանքի մասին /նկ./: Հիսուսի կերպարով այս տեսակի աշխատանքները կրում են «Անձեռակերտ Պատկեր» ("Нерукотворный Образ")՝ քրիստոնեական պատկերագրության մեջ հաստատված անվանումը[6]: Այն առնչվում է Աբգար թագավորի՝ Քրիստոսի անձեռակերտ վարշամակի պատմության հետ, եւ ուշագրավ է, որ հայ արվեստում դեռեւս չէր հանդիպել խճապատկերային կերպար ստեղծելու նման ավանդույթ[7]: Ե. Թադեւոսյանի արվեստում «Անձեռակերտի»՝ առանձին սրբապատկեր ներկայացնող այս օրինակը մեզ համար կարող է համարվել «հայտնություն»: Ռուսական գեղանկարչության մեջ միաժամանակ առկա էին նմանատիպ օրինակներ, իսկ Թադեւոսյանն իր կրթությունը ստացել էր հենց ռուսական գեղարվեստական դպրոցում եւ հակված էր այդ մշակույթին:

Ռուսաստանում ԺԹ դարի վերջում եւ հաջորդ դարասկզբին շատ տարածված էր նոր մեկնաբանմամբ «Անձեռակերտ Պատկերներ» ստեղծելու ավանդույթը թե՛ առանձին կառուցվող եկեղեցիների եւ թե՛ մասնավոր անձանց պատվերով: Սավվա Մորոզովը, օրինակ, իր դաստակերտում՝ Աբրանցեւոյում, կառուցել էր ռուսական հնաոճ եկեղեցի, ուր տեղադրվեց Ի. Ռեպինի «Անձեռակերտ Քրիստոսը» /նկ./: Այդ եկեղեցու ճակատամասը զարդարում է Վ. Պոլենովի ստեղծած «Անձեռակերտ Փրկիչը»՝ կատարված խճապատկերի տեխնիկայով:

ՀԱՊ-ի հուշաարխիվային ֆոնդում Թադեւոսյանի աշխատանքից կատարված լուսանկարը փաստացի միակ նյութն է՝ խճանկարի մասին քիչ թե շատ պատկերացում կազմելու համար: Ընդ որում, երեւում է, որ աշխատանքը լուսանկարվել է տան մեջ՝ հատակին դրված: Լուսանկարի վրա կատարված է գունաներկում, սակայն ե՞րբ է արվել լուսանկարը եւ ո՞ւմ կողմից է ներկվել, դեռեւս անորոշ է[8]:

Գեղաքարերից հավաքված պատկերների տեխնիկային Ե. Թադեւոսյանին ծանոթացրել էր Վ. Պոլենովը դեռեւս 1890-ական թվականներին: Հայտնի են Թադեւոսյանի այդ շրջանի աշխատանքները՝ «Մոլլա Նասրեդդինի տասը ավանակները» (1896), «Կատու» (1896), որոնք այսօր պահվում են Վ. Պոլենովի թանգարան-ավանդատանը:

Տասնմեկ տարի անց Ե. Թադեւոսյանը կրկին վերադառնում է գունավոր քարերից կազմված գեղանկարչական վերոհիշյալ տեխնիկային, որն անվանվում է «օպուս բարբարիկում» /opus barbarikum/[9]: Նա այս անգամ բնական քարերից ստեղծում է երեք հրաշա-

5 Տե՛ս ՀԱՊ, հուշաարխիվային ֆոնդ, ֆ. 57, ի. 4592:

6 Միջնադարյան քրիստոնեական միջավայրում գոյություն ունեին հրաշագործ մասունքներ, սրբապատկերներ, որոնց հետ կապված ավանդույթները նույնքան իրական էին, որքան խոր հավատքի միջոցով այդ մասունքներից ակնկալվող կամ իրագործվող հրաշագործությունները: Սրբագործ մասունք-սրբապատկերներից էր նաեւ «Քրիստոսի անձեռակերտ վարշամակը». այն նաեւ անվանում ենք «Տիրոջ դաստառակ», «Փրկչի կենդանագիր պատկեր» կամ «Հիսուս Քրիստոսի Սուրբ մանդիլիոն» եւ այլն:

7 Տե՛ս **Ս. Վարդանյան**, Վաղղես Սուրենյանցի «Տիրոջ Վարշամակը» եւ նրա պատկերման ավանդույթը //«Հայ արվեստի հարցեր», ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ, զեկուցումների թեզիսներ, նոյեմբեր, 2009, Եր., «Գիտություն», էջ...4:

8 2010-ի օգոստոսին Պոլենովոյի տուն-թանգարան-ավանդատան տնօրինուհի Նատալյա Նիկոլայեւնա Գրամոլինան, հեռաձայնով տեղեկացրեց, որ Ե. Թադեւոսյանի այդ աշխատանքը չի պահպանվել:

9 «Օպուս բարբարիկում» - համարվում է խճանկարչական դժվարին տեխնիկա՝ բազմագույն անմշակ

լի դիմապատկեր՝ «Ինքնադիմանկար» (1907), «Վ. Դ. Պոլենովի դիմանկարը» (1907) եւ «Քրիստոսի պատկերը»[10] (1908): Այդպիսի դիմանկարներ ստեղծելու բարդությունը բնական քարերի անհավասարաչափության ու դրանց գույների սահմանափակության մեջ էր: Հեղինակն ինքն էր երբեմն գունափոխում որոշ քարեր, որոնք ամրացվում էին ցեմենտի շաղախով: «Չնայած «գունապնակի սահմանափակությանը» եւ տեխնիկայի անսովոր կատարողությանը՝ դիմանկարներն ստացվել են արտահայտիչ, սակայն, իհարկե, դիտահայելու համար պահանջում են հատուկ տարաբաժություն»[11],- իրավացիորեն նկատում է Ռ. Դրամբյանը: Ի դեպ, Ե. Թադեւոսյանը չափազանց բարձր էր գնահատում իր այդ աշխատանքները թեեւ հետագայում այլեւս չկիրառեց այդ տեխնիկան:

Հայ նկարչի դիմապատկերներն արժանանում են դրվատանքի խոսքերի: 1910 թվականի մի նամակում Վ. Պոլենովը Ե. Թադեւոսյանին տեղեկացնում է, որ վերջինիս՝ քարերից պատրաստված «Քրիստոսի պատկերը» եւ «Վ. Դ. Պոլենովի դիմանկարը» պիտի ցուցադրվեն նկարիչների միության ցուցահանդեսում՝ Դմիտրովկա փողոցում գտնվող ակումբում[12]: Եվ իրոք, այս երկու խճանկարչական աշխատանքները մասնակցեցին 1910-1912 թթ. Մոսկվայում եւ Սանկտ Պետերբուրգում կայացած «Ռուս նկարիչների միության» VIII-X ցուցահանդեսներին[13]: Գարեգին Հովսեփյանը, իր հոդվածում խոսելով Ե. Թադեւոսյանի սքանչելի արվեստի եւ տեխնիկաների բազմակողմանի ու հմուտ օգտագործման մասին, անում է կարեւոր մի դիտարկում. «Եղիշե Թադեւոսյանը պատրաստում է սքանչելի խճապատկերներ, որոնցից հիշատակելի են «Փրկչի գլուխը», որ պատրաստել է Պոլենովի շինած եկեղեցու դռան ճակատի համար»[14]: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ե. Թադեւոսյանը 1908 թվականին եվրոպական իր հերթական ճանապարհորդությունից վերադառնալիս գալիս է Մոսկվա ու այցելում Վ. Պոլենովի ամառանոցը, կարող ենք ենթադրել, որ «Քրիստոսի պատկերը» ըստ երեւույթին պատրաստվել է տեղում՝ Բորկայի եկեղեցու համար :

Դատելով լուսանկարից՝ կարելի է եզրակացնել, որ աշխատանքը կատարվել է Օկա գետի ափերից հավաքած՝ միջին չափսի նախապես գունազարդված չեղկված գետաքարերից: Փայտյա հիմքի վրա սկզբից արվել է կիսակլոր վերնամասով փորվածք, որի մեջ հավաքվել ու ամրացվել են քարերը: Այդպիսով ստեղծվել է ընդհանուր հարթ տարածություն, եւ տախտակի չփորված եզրային հատվածները դիտվում են որպես շրջանակ: Խճանկարի մակերեսն ուղղահայաց է, վերեւում ավարտվում է կամարաձեւ երիզով: Տարբեր ձեւեր ու չափեր ունեցող հարթ քարերը հատուկ կապակցվող նյութով /հիմքում՝ ցեմենտ/ ամրացված են փայտյա հիմքին: Խճանկարի կենտրոնում Հիսուսի գլուխն է՝ նրա դեմքը: Այն երիզված է դեղնավուն լուսապսակով, քարերի գույները, ասպիճանաբար հեռանալով, ճերմակում են՝

քարերից:

10 Այս աշխատանքի մասին հիշատակում է Ռ. Դրամբյանը՝ իր գրքի վերջին էջերի կատալոգում ներկայացնելով Ե. Թադեւոսյանի հայրենի բոլոր աշխատանքների ցանկը՝ «Քրիստոսի գլուխը» քարերից պատրաստված խճանկարը նա վերագրել է 1908 թվականին՝ նշելով, որ աշխատանքը գտնվում է Վ. Դ. Պոլենովի թանգարանում, տես **Р. Драмтян**, էջ 97:

11 **Р. Г. Драмтян**,, էջ 68:

12 Տես Վ.Պոլենովի նամակը Ե. Թադեւոսյանին, 18 դեկտեմբեր, 1910, ՀԱՊ, ֆ-29, ի 323(20):

13 Տես **В.Лаптин**, Союз русских художников.“Художник РСФСР”.Л., 1974, էջ 107, 170, 230:

14 **Գ. Հովսեփյան**, Նյութեր եւ ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հ. Ա, «Նկարիչ Եղիշե Թադեւոսյան», Եր., 1983, էջ 152:

կարծես լույս արձակելով: Դրանց մեկընդմեջ միանում են կապտագույն քարերը, որոնց մուգ կապույտ շարվածքն ավարտում է նկարի ամբողջ եզրագիծը:

Հիսուսի մուգ գույնի վարսերը, ընչացքն ու մորուքը, սեւ բիբերը, մաշկի՝ վառ գույներով մոդելավորումը հիշեցնում են ասիացու տիպար: Աչքերի ոչ խոշոր կտրվածքը, ձեւը, ուղիղ նայող խորաթափանց, համարձակ հայացքը մեծապես հիշեցնում են Վ. Պոլենովի աչքերը: Ռուս մեծ նկարիչը Ե. Թադեւոսյանի հետ իր զրույցներից մեկի ժամանակ ակնարկել է. «*Զգիտեմ՝ ինչպես եք Դուք պատկերացնում Քրիստոսին: Իրականության մեջ ես տեսնում եմ Քրիստոսի բարի դիմագծերը հիշեցնող մարդկանց*»[15]: Վ. Պոլենովն այնուհետեւ հիշել է իր ուսուցչին՝ Պ. Պ. Չիստյակովին՝ պարզ բնավորությամբ, բարի աչքերով... Հնարավոր է՝ Ե. Թադեւոսյանի այդ պատկերում արտահայտվել է երախտագետ աշակերտի «առաքելական» սերն իր ուսուցչի ազնվագույն կեցվածքի հանդեպ[16]: Թեպետ նկարում պատկերված Քրիստոսի տեսակը ռուսական չէ. նա արեւելյան մի մարգարե է՝ ռուս ազնվականի աչքերով:

Հետագայում՝ արդեն 1919 թվականին, Ե. Թադեւոսյանը վերստին անդրադառնում է Հիսուս Քրիստոսի կերպարին իր ստեղծած «**Քրիստոսը եւ փարիսեցիները**» կտավում (ՀԱՊ, կտ., յուղ., 59,8x122,3) /նկ/: Ուշագրավ է, որ նոր կտավի Քրիստոսի դիմագծերը հիշեցնում են խճանկարի կերպարը: Ե. Թադեւոսյանը պատկերում է պատմական բացառիկ անձի նկարագիրը կրող եւ այդ տարիների համար խիստ արդիական հոգեւոր առաջնորդի, գուցե եւ Անհատի կերպար: Երկու ստեղծագործություններում Քրիստոսի կերպարների մեջ կարելի է նկատել հայկական տիպաժներ՝ մեզ շատ հարազատ եւ ծանոթ: Քրիստոսի պատկերման դարավոր ավանդույթն արդեն ապացուցել է, որ յուրաքանչյուր նկարիչ սեփական լեզվով է արտահայտում ամենասրբազան գաղափարները: Դրանք ջարի, կեղծիքի հերքումն են, միաժամանակ՝ ազգային ոգով ապրելու պատգամը եւ խոհեմությանն ու ազնվությանը հավատալու փափագը... Ռուսական Ուղղափառ Եկեղեցու ճակատամասին տեղադրված «Քրիստոսի գլուխը» խճապատկերը Եղիշե Թադեւոսյանի՝ արեւելցու, հայի մեծ հավատքն էր՝ ներշնչված ռուս մշակույթի փառահեղ, ամենաազնիվ, պայծառատես ներուժով...

15 **Егише Татевосян**, Мои воспоминания о В. Д. Поленове.

16 Ե. Թադեւոսյանը Վ.Պոլենովին ուղղված իր նամակներից մեկում /1924 г. 10 июня, Тифлис, ГТГ, инв N 54 (5660)/ գրում է. "...Я один из младших учеников Ваших, ревностью Евангелиста Иоанна к Христу, чувствами любви и преклонения к Вам преисполнен ..."